ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1443-Լ որոշմամբ հաստատվել է Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը:

Ռազմավարության նպատակ: Ռազմավարությունը նպատակ է հետապնդում միջնաժամկետում նպաստել Հայաստանում ձեռներեցության զարգացմանը և ՓՄՁ-ների արտադրողականության բարձրացմանը:

Ռազմավարության թիրախները: Ռազմավարության համար առանձնացվել են հետևյալ հիմնական թիրախները.

- ***Արտադրողականության աճ***՝ 2021-2023 թվերի համար միջինում տարեկան 3%, իսկ 2024 թվականի համար 7.5%:
- ***ՓՄՁ-ում զբաղվածների աճ***՝ տարեկան միջինում 2.5 %:

Ռազմավարության հիմնական ուղղությունները:

ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ուժեղացման, մրցունակության բարձրացման համար կարևորվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները՝

1) Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում,
2) ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում ,
3) ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում,
4) ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ:

2021 թվականին ՀՀ-ում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների քանակը կազմել է 89 964[1], որոնց.

- Գերփոքր՝ 85 150,
  - որից վարձու աշխատող չունեցող՝ 44 602,
- Փոքր՝ 3 994,
- Միջին՝ 687,

---

1 ***Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2022***

- Խոշոր՝ 133

Ընդ որում, առավել մեծ թվով տնտեսավարողներ գործում են Երևան քաղաքում, ընդհանուր տնտեսավարողների մոտ 50%-ը: Մարզերից, տնտեսական գործունեության տեսանկյունից, առավել ակտիվ են Կոտայքը, Արմավիրը, Արարատը, Շիրակը և Լոռին:

Գծապատկեր 1. Տնտեսավարողների քանակի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ու տնտեսավարողների չափերի



Աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ պատկերը 2021 թվականին հետևյալն է.

- Գերփոքր կազմակերպություններում աշխատում են 96 837 վարձու աշխատակիցներ,
- Փոքր կազմակերպություններում աշխատում են 74 712 վարձու աշխատակիցներ,
- Միջին կազմակերպություններում աշխատում են 69 107 վարձու աշխատակիցներ,
- Խոշոր կազմակերպություններում աշխատում են 105 231 վարձու աշխատակիցներ:

Դիտարկվող տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի հատվածի շրջանակներում վարձու աշխատատեղերի մոտ 69.5%-ը ապահովվում է ՓՄՁ-երի կողմից[2]:

2 ***Փոքր և միջին ձեռնարկատիրություն Հայաստանի Հանրապետությունում, 2022***



2021 թվականին դիտարկվող ոլորտներում տնտեսավարողների կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքը կազմել է.

- Գերփոքր կազմակերպությունների կողմից՝ 787 701.9 մլն դրամ,
- Փոքր կազմակերպությունների կողմից՝ 556 637.9 մլն դրամ,
- Միջին կազմակերպությունների կողմից՝ 588 104.6 մլն դրամ,
- Խոշոր կազմակերպությունների կողմից՝ 1 115 311.5 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, դիտարկվող ոլորտներում կազմակերպությունների կողմից ստեղծվող համախառն ավելացված արժեքում ՓՄՁ-երի կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքի ծավալը կազմել է 63,4%[3]:

3

Փոքր և միջին ձեռնարկատիրություն Հայաստանի Հանրապետությունում, 2022

Գծապատկեր 3. Համախառն ավելացված արժեքն ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի



ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԸՍՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

i. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Տնտեսության արդիականացման միջոցառում

Միջոցառման նպատակ

- ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիություն՝ արդիականացնելու արտադրական կարողությունները
- խթանել արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների մրցունակության
- խթանել աշխատանքի արտադրողականության աճը:

Աջակցության գործիք. տնտեսավարողների կողմից Միջոցառման իմաստով նպատակային համարվող ոլորտներում օգտագործելու նպատակով մեքենա-սարքավորումների ձեռքբերման համար վարկի և լիզինգի տարեկան **տոկոսադրույքի 6-10%** սուբսիդավորում մինչև **48 ամիս**:

Արդյունքային ցուցանիշներ



- 903 վարկային/լիզինգային պայմանագիր՝
- 56.2 մլրդ պորտֆել
- 4.3 մլրդ դրամ տոկոսագումարների սուբսիդավորում

Ընդհանուր պորտֆելից 30.5 մլրդ դրամը ձևավորվել է ՓՄՁ սուբյեկտների կողմից, ընդ որում.

- Գերփոքր կազմակերպություններ՝ կնքվել է 356 պայմանագիր՝ 14.7 մլրդ դրամ պորտֆելով,
- Փոքր կազմակերպություններ՝ կնքվել է 189 պայմանագիր՝ 7.9 մլրդ դրամ պորտֆելով,
- Միջին կազմակերպություններ՝ կնքվել է 156 պայմանագիր՝ 7.8 մլրդ դրամ պորտֆելով,



Միջոցառման շրջանակներում սուբսիդավորման ենթակա գործունեության ոլորտներ.



2. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառում (ֆինանսական բաղադրիչ)

Միջոցառման շրջանակներում տրամադրվող արտոնյալ պայմաններով վարկ.

- 100% երաշխիք՝ ՆԱԿ-ի կողմից (նախկին ՓՄՁ ԶԱԿ)
- առավելագույն գումար՝ 10 մլն դրամ,
- տարեկան տոկոսադրույք՝ տղամարդկանց համար՝ 9%, կանանց համար՝ 7%,
- առավելագույն ժամկետ՝ 60 ամիս,
- արտոնյալ ժամանակահատված՝ 6 ամիս:

Արդյունքային ցուցանիշներ

2020-2022 թվականների ընթացքում արտոնյալ պայմաններով վարկից օգտվել են 108 շահառուներ՝ ընդհանուր 965,753,800.00 դրամով, որոնցից 32-ը 2022 թվականին՝ ընդհանուր 296,304,000:

Տրամադրված վարկային երաշխավորությունների մարզային բաշխվածքը ունի հետևյալ տեսքը.



ii. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառում (կրթական բաղադրիչ)

Միջոցառման նպատակ

- Սկսնակ ձեռներեցների գործունեության ընդլայնում ՀՀ մարզերում
- Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում

Միջոցառման շրջանակներում տրամադրվող օժանդակությունը ներառում է.

- Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման մեկամսյա առցանց դասընթաց,

- Արտոնյալ պայմաններով վարկային երաշխավորության տրամադրում. (մանրամասների համար տես ֆինանսների հասանելիության ռազմավարական ուղղություն)

Արդյունքային ցուցանիշներ

Միջոցառման շրջանակներում՝ միջոցառման մեկնարկից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը.

○ Կազմակերպված դասընթացին մասնակցել են 601 դիմումատուներ, ընդ որում, ըստ տարիների.

- 2020 - 194 մասնակից, ***որոնցից կին՝ 70 (36.4%),***
- 2021 - 298 մասնակից, ***որոնցից կին՝ 138 (46.3%)***
- 2022 - 109 մասնակից, ***որոնցից կին՝ 64 (58.7%)***

2. ԱՔՍԵԼԵՐԱՏՈՐ #5

ՄԱԿՋԾ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագիր

Միջոցառման նպատակ

- Սկսնակ կից ձեռներեցների գործունեության ընդլայնում
- Կին ձեռնարկատերերի հմտությունների զարգացում

Միջոցառման շրջանակներում տրամադրվող օժանդակությունը ներառում է.

- Նախա-աքսելերատոր կամ pre-accelerator, որը նախատեսված է սկսնակ ձեռնարկատերերի համար, ովքեր ունեն ձեռնարկատիրական գաղափար, սակայն չունեն համապատասխան գիտելիքներ:
- Աքսելերատոր, որը նախատեսված է որոշակի ձեռնարկատիրական գիտելիքներ ունեցող անձանց համար, ովքեր կարիք ունեն դրանք առավել խորացնելու որոշակի ուղղվածությամբ:

Արդյունքային ցուցանիշներ

- *Սկսնակ ձեռներեցների ծրագրի շրջանակներում* թիրախ է սահմանվել 50 մասնակից, դիմել է 225 կին ձեռներեց, ՄԱՋԾ լրացուցիչ ֆինանսավորմամբ մասնակցում են 209-ը,

- *Գործող ձեռներեցների ծրագրի շրջանակներում* թիրախ է սահմանվել 50 մասնակից, դիմել է 54-ը, ՄԱԶԾ լրացուցիչ ֆինանսավորմամբ մասնակցում են 54-ը:

Գրապատկեր 6. Ծրագրի արդյունքային ցուցանիշը



3. Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառում Կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի 1224-Լ որոշում

Միջոցառման նպատակ

- բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը
- ստեղծել բարենպաստ ներդրումային միջավայր՝ գիտատար կազմակերպությունների ստեղծման համար

Միջոցառման շահառուներ են համարվում ՀՀ կամ ԼՂ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները:

Միջոցառման շրջանակներում բարձր որակավորում ունեցող մասնագետ է համարվում այն մասնագետը, ով բավարարում է ստորև ներկայացված պահանջներից գոնե մեկին.

Կրթություն

Ավարտել է ծրագրին դիմելու տարում հրապարակված QS համաշխարհային համալսարանների վարկանիշի (QS World University Rankings) առաջատար 400 (չորս հարյուր) ԲՈՒՀ-երից որևէ մեկը և ստացել է բակալավրի, մագիստրոսի և/կամ դոկտորի որակավորում/աստիճան (կամ տվյալ երկրում ընդունված համապատասխան այլ բարձրագույն կրթական որակավորում/աստիճան)

Աշխատանքային փորձ

Ունի նվազագույնը 10 (տասը) տարվա աշխատանքային փորձ հետևյալ վարկանիշային կամ ինդեքս թողարկող ընկերությունների կողմից թողարկված վարկանիշի կամ ինդեքսի մաս կազմող ընկերություններում՝ Forbes, Fortune, HeadHunter, NIFTY, Dow Jones, FTSE, S&P, SSE Composite, SZSE, KOSPI, KOSDAQ, BSE SENSEX, NSE of India, BOVESPA, IBrX, ITEL, Nikkei, TOPIX, DAX, MDAX, MOEX Russia.





Միջոցառման շրջանակներում օժանդակությունը՝ ԲՈՒՀ-ին վճարված աշխատավարձի փոխհատուցում, մասնավորապես.

- Մասնագետին վճարված աշխատավարձի 20%-ը, սակայն ոչ ավելի, քան ամսական 1 000 000 (մեկ միլիոն) դրամ
- Եթե մասնագետը ունի PhD, ապա կփոխհատուցվի 50%-ը, սակայն ոչ ավելի, քան ամսական 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը,
- Եթե PhD-ունեցող մասնագետը կդասավանդի նաև ՀՀ ԲՈՒՀ-երում ապա կփոխհատուցվի նաև ԲՈՒՀ-ի կողմից վճարված աշխատավարձի 70%-ը, սակայն ոչ ավելի, քան գումարային ամսական 2 000 000 (երկու միլիոն) դրամը:

iii. ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՐԵՆՊԱՍՏ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ՝

Պետություն մասնավոր երկխոսություն

Պետություն-մասնավոր երկխոսության շրջանակներում՝ կարևորելով ասոցիացիաների և գործարար միությունների կողմից բարձրաձայնված հարցերին պետության կողմից լուծում տալու կարևորությունը, 2011 թվականին ստեղծվել և արդեն 15 տարի գործում է ՀՀ փոխվարչապետին կից գործող ՓՄՁ զարգացման խորհրդը և ենթախորհուրդը, որի ներքո 2021-2022 թվականներին ընդհանուր առմամբ կայացել է մոտ **15 նիստ**:

Նիստերի շրջանակներում քննարկվել և առաջարկություններ են ներկայացվել ոլորտի համար կենսական նշանակության ավելի քան **50 նախագիծ**: Դրանց մեջ գերակշիռ տեղ են զբաղեցնում ՓՄՁ-երի գործունեությանն առնչվող իրավակարգավորումներնի, այդ թվում՝ հարկային վարչարարությանը և քաղաքականությանը, աշխատանքային օրենսգրքին, պարտադիր ապահովագրությանն և այլ խնդիրներին առնչվող մի շարք հարցեր:

Խորհրդի և ենթախորհրդի աշխատանքների արդյունքներով մշակվել և շրջանառվել են մի շարք նախագծեր, մասնավորապես ուղղված՝

- Հայաստանում գործող ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառման խրախուսմանը,
- Մշակող արդյունաբերության ոլորտում ոչ ակտիվ աշխատուժից մասնագետների ներգրավմանը,
- Ռազմական գործողությունների հետևանքով տուժած մարզերում՝ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում զբոսաշրջության խթանման իրավակարգավորումների ներդրմանը:

ԱՄՆ ՄԶԳ (USAID) աջակցությամբ մշակվել և 2022 թվականի դեկտեմբերի 12-ին Էկոնոմիկայի նախարարի կողմից թիվ Հ/3956-2022 հրամանով հաստատվել է Պետություն-մասնավոր երկխոսության նախաձեռնման, երկխոսության հարթակների ձևավորման ծրագիրը, որով Պետություն-մասնավոր երկխոսության հարթակների քարտուղարության գործառույթները վերապահվել են Էկոնոմիկայի նախարարության Ձեռներեցության վարչության Պետություն-մասնավոր երկխոսության բաժնին:

Տեքստիլ արդյունաբերության զարգացման ծրագիրը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը

Տեքստիլ ոլորտի զարգացման ծրագրի գլխավոր ռազմավարական նպատակն է ապահովել ոլորտի մրցունակության բարելավումը՝

- խթանելով ավելացված արժեքի և արտադրողականության աճը,
- մեծացնելով արտահանման ծավալները՝ հանդես գալով սեփական ապրանքանիշների ներքո,
- նպաստելով աշխատուժի ծավալների ընդլայնմանը՝ կարողությունների կայուն զարգացմամբ,

Տեքստիլ արդյունաբերության զարգացման գործողությունների ծրագիրը բաղկացած է 10 հիմնական գործողություններից, որոնք են.

1) Իրականացնել ինստիտուցիոնալ լուծումներ, որոնք կփոխեն տեքստիլ արդյունաբերության մակրոկառավարման և մոնիտորինգի գործընթացները,
2) Բարելավել տեքստիլ ոլորտի աշխատողների մրցունակությունը (հմտություններ, որակ և արտադրողականություն),
3) Օպտիմալացնել և արդիականացնել բիզնես գործընթացները՝ նպաստելով արդյունավետության և արտադրողականության բարձրացմանը,
4) Արդիականացնել տեքստիլ արդյունաբերության արտադրական օբյեկտները՝ ներդնելով բարձր տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն ավելի բարդ և բարձր ավելացված արժեքով արտադրանքի ստեղծմանը,
5) Նպաստել տեքստիլ ոլորտում կայունության զարգացմանը,
6) Նպաստել և խթանել հայկական ապրանքանիշերի զարգացմանն ու արդյունավետ կառավարմանը,
7) Դիվերսիֆիկացնել մատակարարման շղթան (հումքի շուկաներ)՝ շուկայի կայունությունը բարձրացնելու և այն հավասարակշռելու նպատակով,
8) Ապահովել և խրախուսել հայկական ապրանքանիշերի ներկայացվածությունը նոր սպառողական շուկաներում,
9) Հավասարակշռել տեքստիլ արդյունաբերության զարգացումը Հայաստանի բոլոր մարզերում՝ մասնավորապես ռազմավարական նշանակություն ունեցող և սահմանամերձ տարածքներում՝ նպաստելով երկրի հավասարաչափ սոցիալ-տնտեսական զարգացմանը,
10) Զարգացնել բարդ ապրանքների արտադրությունը՝ նպաստելով Հայաստանի տեքստիլ ոլորտի բարդության ցուցանիշի (PCI) բարձրացմանը:

Գործողությունների ծրագրի իրականացման *արդյունքում* կանխատեսվող ժամանակահատվածում (2023-2026թթ.) ակնկալվում է.

- Տեքստիլ արդյունաբերության ոլորտում արտահանման ծավալների կրկնապատկում,
- Ոլորտում արտադրողականության աճ՝ 1.8 անգամ,
- Ոլորտում աշխատակիցների ավելացում՝ 1.6 անգամ:

2021-2022 թթ. մտավոր սեփականության ոլորտում իրականացված օրենսդրական աշխատանքներ

- ՀՀ Կառավարության քննարկմանն են ներկայացվել «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» նոր ՀՀ օրենքներից բխող թվով 11 նոր ենթաօրենսդրական ակտերի նախագծեր, որոնք Կառավարության կողմից հաստատվել են 2022թ. մայիսի 26-ին:
- Մշակվել և ներկայացվել է «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը (Օրենքը ուժի մեջ է մտել 24.11.2022թ.) և ««Աշխարհագրական նշման, ծագման տեղանվան և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգում փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:
- Մշակվել են ««Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնք 2022թ. հաստատվել են ՀՀ կառավարության կողմից:
- Հայաստանի արդյունաբերության և սպասարկման ոլորտների թվային փոխակերպման նպատակով 2022 թվականին մշակվել է ***Տնտեսության մեջ թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգի*** նախագիծը:

  Հայեցակարգում ներկայացված է առաջարկվող ծրագրերի, միջոցառումների և արդյունքների նկարագրություն: Նախատեսվող 24 ծրագրերն ուղղված են.
  - թվային էկոհամակարգում կարողությունների զարգացմանը (2 ծրագիր),
  - շահառուների հզորացմանը (4 ծրագիր),
  - թվային տեխնոլոգիաների ներդրմանը (18 ծրագիր):

  Հայեցակարգի նախագիծը ներկայումս քննարկվում է բիզնես ասոցիացիաների և միջազգային կազմակերպությունների հետ:

iv. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ընթացքում քայլեր են իրականացվել միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցային հարաբերությունների հաստատման և դրանց կայունության ապահովման նպատակով: Մասնավորապես.

Հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողով

- 2022 թվականի ապրիլին վավերացվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրը, համաձայն որի Գերմանահայկական հիմնադրամի միջոցով **116 մլն եվրո** արտոնյալ վարկային միջոց է տրամադրել ՀՀ բանկային համակարգին՝ այդ թվում ՓՄՁ ֆինանսավորման համար: Վարկային պայմանագիրը ստորագրվել է 2021 թվականի հոկտեմբերին՝ միջկառավարական նիստի ընթացքում:
- 2022 թվականի ընթացքում միջկառավարական հանձնաժողովի ակտիվ աշխատանքի արդյունքում՝ ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը (BMZ) որոշում է կայացրել Հայաստանը վերադարձնել «2030թ. բարեփոխումների ռազմավարության» տրանսֆորմացիոն (երկկողմ) գործընկերների ցանկ:
  2020թ. Հայաստանը «Տրանսֆորմացիոն երկկողմ գործընկերոջ» կարգավիճակից տեղափոխվել էր բազմակողմ համագործակցության խումբ:
  BMZ-ի «տրանսֆորմացիոն» գործընկերների ցանկում ներառվելը հնարավոր կդարձնի երկկողմ տեխնիկական համագործակցությունը:
- 2022 թվականի նոյեմբերին, մինչև նոր բանակցությունների վերսկսումը, ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը (BMZ) որոշում է կայացրել Հայաստանին տրամադրել հավելյալ 12 մլն եվրո արտոնյալ վարկ՝ բանկային համակարգի միջոցով ուղղելու ՓՄՁ էներգարդյունավետության բարձրացմանը:

«Տեքստիլ Ալյանս Հայաստան-Իտալիա» գործարար համաժողով

2022 թվականի սեպտեմբերի 22-24-ը «Տեքստիլ Ալյանս Հայաստան-Իտալիս» գործարար համաժողովը իրականացվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ: Համաժողովին մասնակցել են տեքստիլ արդյունաբերության ոլորտի 7 կազմակերպություններ:

Համաժողովի ընթացքում.

- տեղի են ունեցել B2B հանդիպումներ ոլորտի ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են սեփական բիզնեսը ընդլայնելու հնարավորությունները, հումք Հայաստան ներկրելու հնարավոր տարբերակները և գործարարներին հետաքրքրող այլ հարցեր,
- տեղի են ունեցել գործնական քննարկումներ իտալացի և Իտալիայում բնակվող ազգությամբ հայ թեթև արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչ գործարարների հետ,
- տեղի են ունեցել հանդիպումներ մտավոր սեփականության հարցերով զբաղվող թիմի հետ՝ բրենդի գրանցումը և միջազգային հարթակներում բրենդի անխափան ներկայությունը ապահովելու նպատակով:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)

- Էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից կազմակերպվել է աշխատանքային հանդիպում, որի շրջանակներում քննարկվել է Արևելյան գործընկերության երկրների ՓՄՁ քաղաքականության 2024 թվականի ինդեքսը: Աշխատանքային այս հանդիպումը պետական մակարդակով առաջին հանդիպումն էր, որի նպատակն էր համախմբել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը նպաստող քաղաքականության մշակման ու իրականացման մասնակիցներին, ինչպես նաև ՏՀՋԿ երկրների քաղաքականությանը մասնակցող և ՀՀ-ում գործունեություն իրականացնող փորձագետներին:
- 2022 թվականին աշխատանքներ են տարվել 2024 թվականի ՓՄՁ քաղաքականության ինդեքսի (SME Policy Index 2024) մշակմանն ուղղված հարցաթերթի լրացման ուղղությամբ:

- Էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից կազմակերպվել է աշխատաժողով, որի շրջանակներում քննարկվել է Հայաստանում ՓՄՁ-երի թվային փոխակերպման առաջխաղացումը (Advancing the digital transformation of SMEs in Armenia): Էկոնոմիկայի նախարարության համագործակցությամբ ՏՀՋԿ-ն սկսում է նոր նախագիծ, որի նպատակն է Հայաստանում ՓՄՁ-երի թվայնացման խթանումը: Պետական-մասնավոր աշխատանքային խմբերի հանդիպումների շարքը միտված է Հայաստանում ՓՄՁ-երի թվային փոխակերպման աջակցության քաղաքականության մշակմանը:

Կորեայի ՓՄՁ-ների և ստարտափերի ինստիտուտ, Կորեայի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունում (KSP)

Գիտելիքի փոխանակման ծրագրի (Knowledge Sharing Program) շրջանակներում Կորեայի Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության հետ սկսվել է փորձի փոխանակման ծրագիր: Դեկտեմբերի 19-ից 21-ը Կորեական կողմի՝ ՀՀ ժամանած պատվիրակության հետ քննարկվել է «Հավաստագրման համակարգի օգտագործումը նորարարական ՓՄՁ-ների բացահայտման և խթանման համար» ծրագիրը, որի իրականացումը կնպաստի ՀՀ տնտեսության կայուն և ներառական զարգացմանը նպաստող նորարարական և մրցունակ ՓՄՁ-ների ձևավորման և զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: